Հայերեն տարբերակը տես ստորև
Նահանգի օրենսդրության համառոտ նկարագրությունը

Ձեր իրավունքները և պաշտպանության միջոցները անսպասելի բժշկական հաշիվների դեպքում

Երբ ցանցում չներառված բժիշկը շտապ օգնություն է ցույց տալիս կամ բուժում է ձեզ ցանցում ներառված հիվանդանոցում կամ ամբուլատոր վիրաբուժական կենտրոնում, դուք ապահովագրված եք հաշվեկշռի հաշվից: Այդ դեպքերում ձեզանից չպետք է գանձվի ձեր ծրագրի հավելավճարներից, համաապահովագրության վճարից և/կամ պահումներից ավել:

Ի՞նչ է «հաշվեկշռի հաշիվը» (երբեմն կոչվում է «անսպասելի հաշիվ»):

Երբ դուք դիմում եք բժշկի կամ բժշկական ծառայությունների այլ մատակարարի, դուք կարող եք ունենալ որոշակի ծախսեր սեփական գրպանից, ինչպիսիք են՝ հավելավճարը, համաապահովագրության վճարը կամ պահումները: Դուք կարող եք ունենալ լրացուցիչ ծախսեր կամ ստիպված լինել վճարել ամբողջ հաշիվը, եթե դիմեք ձեր առողջապահական ծրագրի ցանցում չներառված բժշկի կամ բժշկական հաստատություն: «Ցանցում չներառվածները» այն բժիշկներն ու բժշկական հաստատություններն են, որոնք ձեր առողջապահական ծրագրի հետ ծառայությունների մատուցման պայմանագիր չեն կնքել: Ցանցում չներառված բժշկական ծառայությունների մատակարարները կարող են ձեզանից գանձել ձեր ծրագրի վճարած գումարի և ծառայության ամբողջ արժեքի տարբերությունը: Այն կոչվում է «**հաշվեկշռի հաշիվ**»: Այս գումարը, ամենայն հավանականությամբ, ավելի մեծ է, քան նույն ծառայության համար ցանցի ներսում արվող ծախսերը և կարող է չներառել Ձեր ծրագրի պահումները կամ ձեր սեփական միջոցների տարեկան սահմանաչափը: «Անսպասելի հաշիվը» անսպասելի հաշվեկշռի հաշիվն է: Դա կարող է տեղի ունենալ, երբ դուք չեք կարող վերահսկել, թե ով է ներգրավված ձեր խնամքի մեջ, օրինակ, երբ դուք ստանում եք շտապ օգնություն կամ երբ դուք պլանավորում եք այցելել ցանցային հաստատություն, բայց անսպասելիորեն բուժում եք ստանում ցանցում չներառված մատակարարից: Անսպասելի բժշկական հաշիվները կարող են արժենալ հազարավոր դոլարներ՝ կախված ընթացակարգից կամ ծառայությունից:

Դուք պաշտպանված եք հաշվեկշռի հաշվից:

Շտապ օգնության ծառայություններ

Եթե դուք ունեք անհետաձգելի բժշկական իրավիճակ և ստանում եք շտապ օգնություն ցանցում չներառված բժշկից կամ բժշկական հաստատության կողմից, ապա առավելագույն գումարը, որ կարող են ձեզանից գանձել, դա ձեր ծրագրի ցանցում ներառված վճարման ձեր պարտադիր չափաբաժինն է (ինչպիսիք են հավելավճարները, համաապահովագրության վճարը և պահումները): Այդպիսի շտապ օգնության ծառայությունների դիմաց ձեզ **չեն կարող** հաշվեկշռի հաշիվ ներկայացնել: Այն ներառում է ծառայություններ, որոնք դուք կարող եք ստանալ՝ արդեն կայուն վիճակում գտնվելիս, եթե միայն կայունացումից հետո այդ ծառայությունների համար հաշվեկշռի հաշվով գանձվելու գրավոր համաձայնություն չեք տալիս և չեք հրաժարվում Ձեր պաշտպանությունից:

Բացի Անակնկալներից պաշտպանության մասին դաշնային օրենքով նախատեսված պաշտպանության միջոցներից՝ այն նահանգը, որտեղ դուք ստանում եք ծառայություններ, կարող է ունենալ պաշտպանության միջոցներ, որոնք կիրառելի են շտապ և ոչ շտապ օգնության ծառայությունների համար ձեր այցելությանը: Լրացուցիչ տեղեկություններ կարելի է ստանալ ձեր նահանգի կառավարությունից: (լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք https://www.trinity-health.org/assets/documents/billing/disclosure_notice_regarding_patient_protections_against_surprise_billing.pdf*): Դաշնային պաշտպանության միջոցները գերազանցում են նահանգային պաշտպանության միջոցները գրեթե յուրաքանչյուր նահանգում:*

Հետևյալ նահանգները սահմանափակում են այն գումարը, որը կարող են գանձել ձեզանից ցանցում չներառված բժշկի և ցանցում չներառված բժշկական հաստատության ցուցաբերած բուժօգնության համար՝ Կալիֆորնիա, Կոնեկտիկուտ, Ֆլորիդա, Ջորջիա, Այովա, Մերիլենդ, Միչիգան, Նյու Ջերսի, Նյու Յորք, Օհայո, Փենսիլվանիա: Գումարը սահմանափակվում է ցանցի վճարման ձեր պարտադիր չափաբաժնով: Հետևյալ նահանգները սահմանափակում են այն գումարը, որը կարող են գանձել ձեզանից ցանցում չներառված բժշկի ցուցաբերած բուժօգնության համար ցանցի ներսում վճարման ձեր պարտադիր չափաբաժնով՝ Դելավեր, Ինդիանա, Իլինոյս, Մասաչուսետս, Օրեգոն, Օհայո, նաև ապահովում լաբորատորիական ծառայություններին վերաբերվող պաշտպանական միջոցներ: Մի քանի նահանգներում գործում են վեճերի լուծման ընթացակարգեր (Կալիֆորնիա, Ֆլորիդա, Ջորջիա, Իլինոյս, Նյու Ջերսի, Նյու Յորք, Միչիգան), իսկ մի քանի նահանգներում սահմանվում են այն գումարները, որոնք կարող են վճարվել մատակարարներին (Կալիֆորնիա, Կոնեկտիկուտ, Դելավեր, Ֆլորիդա, Ջորջիա, Մերիլենդ, Միչիգան, Օրեգոն):

Որոշակի ծառայություններ ցանցում ներառված հիվանդանոցում կամ ամբուլատոր վիրաբուժական կենտրոնում

Երբ դուք ստանում եք ծառայություններ ցանցում ներառված հիվանդանոցում կամ ամբուլատոր վիրաբուժական կենտրոնում, որոշ բժիշկներ կարող են ցանցում ներառված չլինել: Այս դեպքերում, առավելագույնը, որ այդ մատակարարները կարող են հաշիվ ներկայացնել ձեզ, դա ձեր ծրագրի ցանցի ներսում վճարման ձեր պարտադիր չափաբաժինն է: Դա վերաբերում է շտապ բուժօգնության դեղորայքին, անզգայացման, պաթոլոգիայի, ճառագայթաբանության, լաբորատորիայի, նեոնատոլոգիայի, վիրաբույժի օգնականի, հոսպիտալիստի կամ ինտենսիվ թերապիայի մասնագետի ծառայություններին: Այս մատակարարները **չեն կարող** ներկայացնել ձեզ հաշվեկշռի հաշիվ և **չեն** կարող խնդրել ձեզ հրաժարվել հաշվեկշռի հաշվով չգանձվելու ձեր պաշտպանության միջոցներից: Եթե դուք ստանում եք այլ տեսակի ծառայություններ այդ ներցանցային բժշկական հաստատություններում, ցանցից դուրս բժշկական ծառայություն մատուցողները **չեն կարող** ձեզ հաշվեկշռի հաշիվ ներկայացնել, մինչև դուք գրավոր համաձայնություն չտաք և չհրաժարվեք ձեր պաշտպանությունից:

Դուք<u>երբեք</u> պարտավոր չեք հրաժարվել հաշվեկշռի հաշվով չգանձվելու ձեր պաշտպանությունից: Դուք նաև պարտավորված չեք խնամք ստանալ ցանցից դուրս: Դուք կարող եք ընտրել բժշկին կամ բժշկական հաստատությունը ձեր ծրագրի ներսում:

Բացի Առանց անակնկալների դաշնային օրենքով նախատեսված պաշտպանության միջոցներից՝ այն նահանգը, որտեղ դուք ստանում եք ծառայություններ, ցանցի բժշկական հաստատության շտապ բուժօգնության հետ կապված ծառայությունների համար կարող է ունենալ կիրառելի պաշտպանության միջոցներ: Լրացուցիչ տեղեկատվությունը հասանելի է ձեր նահանգի կայքում (Լրացուցիչ տեղեկությունների

համար այցելեք https://www.trinity-health.org/assets/documents/billing/disclosure_notice_regarding_patient_protections_against_surprise_billing.pdf*):*

Հաշվեկշռի հաշվի արգելման ժամանակ դուք նաև ունեք հետևյալ պաշտպանության միջոցները.

- Դուք պատասխանատու եք միայն ձեր ծախսերի մասնաբաժնի վճարման համար (ինչպիսիք են հավելավճարները, համաապահովագրության վճարը և պահումները, որոնք դուք կվճարեիք, եթե բժիշկը կամ բժշկական հաստատությունը լիներ ցանցի ներսում): Ցանկացած լրացուցիչ ծախսի համար ձեր առողջապահական ծրագիրը կվճարի անմիջապես ցանցում չներառված բժիշկներին կամ բժշկական հաստատություններին:
- Որպես կանոն, ձեր առողջապահական ծրագիրը պարտավոր է.
    - Փակել շտապօգնության ծառայությունների ծախսերը՝ առանց ձեզանից նախնական թույլտվություն պահանջելու (որը հայտնի է նաև որպես «նախնական համաձայնություն»):
    - Փակել ցանցում չներառված բժիշկների ցուցաբերած շտապ բուժօգնության ծառայությունների ծախսերը:
    - Հիմնավորել, թե այն գումարը, որը դուք պետք է վճարեք բժշկին կամ բժշկական հաստատությանը (վճարման ձեր պարտադիր չափաբաժինը) այն հիմքով, որ նա կվճարեր ցանցային բժշկին կամ հաստատությանը, և նշել այդ գումարը վճարումների բացատրության մեջ:
    - Ցանկացած գումար, որը դուք վճարում եք շտապ օգնության կամ ցանցից դուրս բժշկական ծառայությունների համար, ուղղել ձեր ցանցային պահումների և ձեր սեփական միջոցների սահմանաչափի մարմանը:

Եթե կարծում եք, որ ձեզ սխալ հաշիվ են ներկայացրել, դիմեք ձեր նահանգին (*լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք*https://www.trinity-health.org/assets/documents/billing/disclosure_notice_regarding_patient_protections_against_surprise_billing.pdf*)* կամ Medicare-ի և Medicaid-ի ծառայությունների կենտրոններ 1-800-985-3059 հեռախոսահամարով: Ձեր նահանգի կայքը կարելի է գտնել հետևյալ հասցեով՝ www.[մուտքագրեք ձեր նահանգի անվանումը].gov և «առանց անակնկալների, հաշվեկշռի հաշիվ կամ սպառողների իրավունքների պաշտպանություն» որոնում կատարելով: Դաշնային օրենքով ձեր իրավունքների մասին լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք https://www.cms.gov/nosurprises: